ՀՏԴ : 902/904(479.25) + 725.94

Doi:10.54503/0135-0536-2025.2-247

ԱՐՑԱԽԻ ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՎ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ*

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Արցախ, դամբարան, դամբանաղաչտ, ննջեցյալ, ձի, սանձ, հատկանիշ, սկյութական, նետասլաք:

Ամփոփում

Հայկական լեռնաշխարհի արևելքում սկյութական ցեղերի երբեմնի ներկայության փաստը վաղուց է արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը: Հավանական է՝ Մեծ Հայքի Ուտիք նահանգում գտնվող Գանձակի հարթավայրը, որը հայերի կողմից անվանակոչվեց Շակաշեն, Այսրկովկաս ներթափանցած սկյութական ցեղերի կենտրոնացման վայրերից էր: Այդ տարածաշրջանին սահմանակից Արցախ նահանգի որոշ դամբանաբլուրների մասին դեռևս մեկ դար առաջ կարծիք է հայտնվել, որ դրանք կառուցվել են սկյութների կողմից: Հետագայում Արցախում պեղվել են հարյուրավոր դամբարաններ, որոնցից ընտրվել են 15-ը: Դրանք ներառում են Արցախի այն դամբարանները, որոնցում առկա են սկյութական մշակույթին առանձնահատուկ հատկանիշներից առնվազն երեքը, որոնցից գոնե մեկը՝ ընորոշիչ: Վարանդա և Փառնես պատմական գավառների, Խաչենագետի ավազանի ու Վարանդա գետի աջ ափի դամբանների հնագիտական ուսումնասիրությամբ ստացված տվյալների հիման վրա Արցախի սկյութական հատկանիշներով դամբարանների թաղման որոշ ծիսակարգերի և արարողությունների վերակազմության փորձ է արվում: Ծիսական սերտ ընդհանրություններ են ուրվագծվում Արցախի ու այլ տարածաշրջանների սկյութական մշակույթին պատկանող դամբարանների միջև:

Նախաբան

Ուսումնասիրողները գտնում են, որ Գանձակի տարածաշրջանը (Շակաշենը) սկյութների նստավայրերից էր[1]*: Դեռևս 1924 թվականին՝ Ուտիքին հարավից սահմանակից Արցախի հուշարձաններն ուսումնասիրելիս, հնագետ Սմբատ Տեր-Ավետիսյանն առանց պեղումներ կատարելու եկել է այն եզրակացության,*

---

* *Ներկայացվել է 25. IV. 2025 թ., գրախոսվել է 29. IV. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

© *Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

[1] *Երեմյան. 1968, 94–95, Ադոնց. 1972, 304,* Дьяконов. 1956, 251; Меликишвили. 1959, 224.

որ որոշ դամբանաբլուրներ կառուցվել են սկյութների կողմից[2]: Հնագետ Ալեքսանդր Յեսսենի ղեկավարած արշավախմբին թեև չի հաջողվել Արցախին հարող տափաստանային հուշարձաններում «նշմարել բուն սկյութական բաղադրիչը», սակայն Հրաքոտ-Պերոժի (Փայտակարան) Փոքր դամբանաբլրի (մ. թ. ա. VII դ.) պեղումների հիման վրա հնարավոր է դարձել ապացուցել, որ Մինգեչաուրի (Ուտիք) հարուստ դամբանաբլուրները մ. թ. ա. XI–IX դդ. թվագրելը զուրկ է գիտական հիմքից: Դրանով առաջ է քաշվել Փայտակարանի և Ուտիքի հիշյալ դամբանաբլուրների համաժամանակացման անհրաժեշտությունը: Ա. Յեսսենը լիովին հնարավոր էր համարում, որ սկյութական հեծյալ ջոկատների համար ձմեռոց են ծառայել Արցախի տափաստանները[3]: Պատմական Փառխոսում և Գարգարացվոց դաշտում մ. թ. ա. II դարի սկզբին սկյութական ցեղերի ներկայությունը հիշատակում է վրաց պատմիչ Լեոնտի Մռավելին[4]: Սկյութները «հնդեվրոպական ժողովուրդ» են համարվում[5] և բնորոշվում են որպես իրանական լեզուներին պատկանող ցեղախումբ[6]:

Մեր ընտրանքի մեջ են մտել Արցախի մ. թ. ա. VII–VI դդ. թվագրվող այն դամբարանները, որոնցում համատեղ առկա են սկյութական թաղումներում հանդիպող մի քանի տասնյակ հատկանիշներից առնվազն երեքը, այդ թվում՝ գոնե մեկ բնորոշիչ հատկանիշ: Բնորոշիչ կամ բուն սկյութական հատկանիշներ են համարվել մարդակերպ մահարձանները, կոր պատով օժտված դամբանախցերը, կմախքի՝ մեջքի վրա ձգված դիրքը, մարդու, ձիու, ուղտի, շան / գայլի զոհաբերությունները, ձիասարքի համապատասխան տիպերը, մարտական կոր դանակները, ակինակները, բոլորատեգերը, քլունգաձև մարտական կացինները, սկյութական տիպի նետասլաքները, կախազակով սրոցաքարերը, զարդախողովակները, ներճկված կամ երկծալ ապարանջանները և եղջերագավաթները: Որոշակի ձևաբանությամբ ու պատկերագրությամբ օժտված մարդակերպ քարե արձանի կամ մեջքի վրա ձգված դիրքով կմախքի ներկայությունը խոսուն վկայություն է դամբարանի մշակութային պատկանելության վերաբերյալ, մինչդեռ սկյութական նետասլաքի առանձին հայտնաբերումը դեռ չի նշանակում, որ գործ ունենք հատկապես սկյութի հուղարկավորության հետ, թեև այդ արտեֆակտ-հատկանիշը, անկասկած, չի կարող ոչ տիպական համարվել քննարկվող թաղումների համար: Էլ չենք խոսում ջլաղեղով օժտված խողովակաձև նիզակի մասին, որը սկյութական զինական համալիրի բաղադրատարրերից է, սակայն բնորոշիչ / մարկեր չի հանդիսանում:

Վարանդա գավառի դամբանախմբերը

Արցախի հնավայրերի շարքում ամենանշանավորներից է Խոջալիի դամբարանադաշտը, որի մեծ դամբանաբլուրները չափերով իրենց հավասարը չունեն Հայաստանի հուշարձաններում: Այն գտնվում է Վարանդա (Պարսականք) գավառում, Գարգար (Կարկառ) գետի և նրա վտակ Պատարայի միջև, դրանց միախառնման վայրից ոչ հեռու՝ Ասկերանի շրջանի Խոջալի ավանի արևմտյան արվարձանում: Թվով շուրջ 100 դամբանաբլուրներ տեղադրված են մեկը մյուսին բավականին մոտ՝ մի քանի մետր հեռավորության վրա, երբեմն՝ ուղղակի իրար կից: Խոջալիի դամբանադաշտի առաջին ուսումնասիրողներն են Էմիլ Ռյոսլերը,

---

[2] Тер-Аветисян. 2010, 189.

[3] Иессен. 1965, 22–30.

[4] Мровели. 1979, 33–34, 71–72.

[5] *Ստրաբոն. 1940, 111, Ադոնց. 1972, 272:*

[6] *Ջահուկյան. 1987, 501,* Дьяконов. 1956, 241.

Ալեքսեյ Իվանովսկին և Խաչիկ Դաղյանը[7]*: XX դարի երկրորդ կեսին այդ հնավայրում պեղումներ է կատարել Կարինե Քուշնարյովան*[8]*: Մեզ հետաքրքրող դամբարանները տեղադրված են դամբարանադաշտի արևելյան ու հարավարևելյան հատվածներում: Դրանցից երկուսն ունեն հողե լիցք, իսկ մյուսները քարե լիցքով դամբանաբլուրներ են, որոնցով ծածկված են քարարկղային խոշոր դամբանասրահները:*

Խոջալիի № 2 հողե դամբանաբլուրն ընկած է դամբանադաշտի արևելյան հատվածում: Հատակագծում այն ձվաձիր է և ունի 11,5 մ բարձրություն, մեծ առանցքի երկարությունը 76 մ է, փոքրինը՝ 13 մ: Այստեղ հայտնաբերվել են տախտակամածի ածխացած մնացորդներ, մարդու և զոհաբերված կենդանիների (ներառյալ ձիու և շան) ոսկորներ: Ուղեկցող գույքի կազմում կան բրոնզե նետասլաքներ, կաթսա, գոտի, պերճանքի առարկաներ, քարե ամաններ, խեցանոթներ, «այլ իրեր» (աղ. I): Փաստագրվել է սկյութական թաղումներում հանդիպող 10 հատկանիշ:

Աղյուսակ I



Խոջալիի № 2 դամբանաբլրի թաղման գույքը (Кушнарева. 1970, 112, рис. 2):

№ 18 հողե դամբանաբլուրը գտնվում է № 2-ից քիչ հեռու՝ դեպի արևմուտք, տրամագիծը 84 մ է, բարձրությունը՝ 10 մ: Դամբանաբլրի հարավային հատվածում՝ 4,5 մ խորությունում, հայտնաբերվել են արևմուտք-արևելք առանցքով ուղղված 3 ննջեցյալների կմախքներ՝ մեջքի վրա ձգված դիրքով: Թաղման գույքի կազմում առկա են եղել բրոնզե գոտիներ, զարդախողովակներ, եղջերուի արձանիկով ավարտվող գավազանի գլխիկ, պերճանքի առարկաներ, խեցանոթներ: Գրանցվել է սկյութական 6 հատկանիշ:

Գետաքարե լիցքով № 11 դամբանաբլուրը տեղադրված է դամբանադաշտի հարավարևելյան հատվածում: Մեծ առանցքի երկարությունը 39 մ է, փոքր առանցքինը՝ 11 մ, դամբանաբլրի բարձրությունը՝ 4 մ: Թաղման քարարկղի

[7] Реслер. 1897, 49–51; Реслер. 1900, 151–154; Ивановский. 1911, 148–151; *Դաղեան. 1898, 63–74:*

[8] Кушнарева. 1959, 370–385; Кушнарева. 1970, 109–116.

չափերն են՝ 3,9 x 2,0 x 1,9 մ: Թաղումն ուղեկցող գույքի կազմում նշվում են բրոնզե ու երկաթե առարկաները, ջնարակած ափսեն, Ասորեստանի արքա Աղադնիրարիի արձանագրությամբ ագաթե ուլունքը, պերճանքի մյուս առարկաները: Արձանագրվել է սկյութական մշակութային 5 հատկանիշ:

Գետաքարե լիցքով № 19 դամբանաբլրի բարձրությունը 4 մ է, երկար առանցքը՝ 22 մ, կարճ առանցքը՝ 8 մ: Երկար ու նեղ՝ 5,50 x 2,74 x 2,50 մ չափերով թաղման քարարկղում դրված են եղել բրոնզե դաշույն, քառակող բիզ, պերճանքի առարկաներ, որոնց թվում՝ ջնարակած ուլունքներ: Թերի տվյալներով ներկայացված այս փակ համալիրում, այնուամենայնիվ, կարելի է փաստել սկյութական 4 հատկանիշի առկայությունը:

Խոշոր գլաքարերի լիցքով № 20 դամբանաբլրի բարձրությունը 3 մ է, երկար առանցքը՝ 18 մ, կարճ առանցքը՝ 8 մ: Ինչպես դամբանաբլուրը, այնպես էլ ուղղանկյուն հատակագծով, երկար ու նեղ թաղման քարարկղը (5,0 x 2,5 x 2,0 մ) չափերով համադրելի են նախորդ դամբանաբլրի կառուցվածքային համապատասխան բաղադրիչներին: Հուղարկավորության սրահում ննջեցյալն ամփոփվել է դիաթաղման եղանակով: Հանգուցյալին ուղեկցող գույքի կազմում եղել են բրոնզե նրբագեղ հարթ կացին, կլորացող ծայրերով դանակներ, պերճանքի առարկաներ, պատկերազարդ ուղղաձիգ պատերով ջնարակապատ անոթ[9]: Գրանցվել է սկյութական մշակութային 5 հատկանիշ:

Շուշիից հարավ՝ ճանապարհամերձ տեղանքում, մարդու կմախքին կից գտնվել են երկաթե դանակի բեկոր, քառակող բիզ և բրոնզե զարդախողովակներ[10]: Այստեղ դիտվում են ննջեցյալի թաղման պարտադիր նվազագույն երեք բաղկացուցիչներից երկուսը՝ մարդու կմախքի և ուղեկցող գույքի առկայությունը: Բաց է մնում հուղարկավորության խցի գոյության հանգամանքը: Ամեն դեպքում, կարելի է խոսել սկյութական 4 հատկանիշի առկայության մասին:

Ներքին Հոռաթաղի դամբարանադաշտը տարածվում է գյուղի հյուսիս-արևմտյան հատվածում՝ «Պտաշանց կալ» կոչվող տեղանքում: Այստեղ կատարված հողային աշխատանքների ընթացքում պատահաբար բացվել են քարարկղային և հիմնահողային խցերով դամբարաններ: Հիմնահողային դամբանախցերից մեկում ամփոփված են եղել երկու ննջեցյալ՝ դիաթաղման եղանակով, մեջքի վրա պառկած դիրքով: Հանգուցյալներին ուղեկցող գույքի կազմում (աղ. II) եղել են սկյութական նետասլաքներ, բիզ, սրոցաքար, ձիասանձի մասեր, պերճանքի առարկաներ, խեցանոթներ[11]: Քննարկվող խաթարված դամբարանում գրանցվել է սկյութական 7 հատկանիշ:

Փառնես գավառի դամբանախմբերը

Պատմական Փառնես գավառում՝ Շամքոր գետի ավազանում, հայտնի է Գետաբեկի դամբանադաշտը, որտեղ 1896 թ. 72 քարարկղներ ու սալարկղներ է պեղել Ա. Իվանովսկին: Պեղված մի խումբ դամբարաններում հայտնաբերվել են երկաթե կոր դանակներ, սրոցաքարեր, սկյութական եռաթև նետասլաքներ, բրոնզե ու երկաթե նիզակներ, բրոնզե դաշույններ, ձիասանձի մասեր, քարե

---

[9] Реслер. 1897, 50–51, рис. 102; Реслер. 1900, 151–154, рис. 299–303; Кушнарева. 1970, 109–116, рис. 1–8.

[10] Реслер. 1900, 150.

[11] *Асрян. 1973, 297–298,* Асрян. 1999, 23–24, 107, таб. 21.

անոթ, «այլ իրեր»[12]: Զոհաբերված ձիերի դանդեր են գտնվել № 33 և № 56 դամբարաններում: Սկյութական մշակութային հատկանիշներով դամբարանների այդ խմբից առանձնացվել են 5-ը:

№ 33 թաղման սալարկղն ունեցել է 2,50 x1,05 x1,15 մ չափեր և ուղղված է եղել հյուսիս-արևմուտք–հարավ-արևելք առանցքով: Հուղարկավորման խցում ննջեցյալն ամփոփվել է դիաթաղման եղանակով, թաղումն ուղեկցվել է ձիու զոհաբերությամբ:

Աղյուսակ II

Ներքին Հոռաթաղի «Պտաշանց կալ» տեղանքի դամբարանում հայտնաբերված մի խումբ արտեֆակտեր (А с р я н. 1999, 107, таб. 21):

Ուղեկցող գույքի կազմում առկա են եղել բրոնզե դաշույն, սրոցաքարեր, պերճանքի առարկաներ, վանակատե նետասլաքներ, բրոնզե կոճակներ, խեցանոթներ: Գրանցվել է սկյութական 5 հատկանիշ:

№ 42 ստորգետնյա քարարկղի չափերն են 2,05x1,10 x1,20 մ, որն ուղղված է եղել դեպի արևելք–հարավ-արևելք: Հանգուցյալն ամփոփվել է դիաթաղման եղանակով, մեջքի վրա ձգված դիրքով: Թաղման խցում ի հայտ են եկել բրոնզե դաշույն, երկաթե նիզակ, տերևաձև նետասլաք, փոքր դանակ, խեցանոթներ: Պեղումների արդյունքներով փաստագրվել է սկյութական մշակութային 4 հատկանիշ:

№ 48 սալարկղի չափերն են 2,05x0,90x1,15 մ, կողմնորոշվածությունը՝ հարավ–հարավ-արևմուտք: Անհատական դիաթաղումն ուղեկցող գույքի կազմում եղել են բրոնզե դաշույն, սկյութական տիպի նետասլաքներ, պերճանքի առարկաներ, «այլ իրեր»: Կարելի է փաստել սկյութական ընդամենը 3 հատկանիշի առկայությունը:

Նախորդի ուղղվածությունն է ունեցել նաև № 56 քարարկղը, որն իր 2,20x1,00x1,05 մ չափերով ևս համադրելի է հիշյալ № 48 սալարկղին: № 56 դամբարանի թաղման խցում ննջեցյալի դին տեղադրված է եղել կողքի վրա

[12] И в а н о в с к и й. 1911, 108, 116, 120, 133, 137, 146–147, 162, 186, таб. III,12–13, V,1–3,7–8, VIII,35–36.

ձգված դիրքով, թաղումն ուղեկցվել է ձիու զոհաբերությամբ: Դամբարան են դրվել նաև ձիասանձը և ձիու զարդարանքը կազմող առարկաներ: Ուղեկցող գույքը բաղկացած է եղել բրոնզե նիզակից, հարթ կացնից, քարե անոթից, խեցանոթներից: Կարելի է փաստել սկյութական 6 հատկանիշի առկայությունը:

Գետաբեկի դամբանադաշտի № 62 քարարկղի չափերն են 2,00x0,90x1,10 մ, կողմորոշվածությունը՝ հարավ-արևելք: Հանգուցյալն այստեղ ամփոփվել է դիաթաղման եղանակով: Թաղման խցում գտնվել են զենք, աշխատանքի գործիք, պերճանքի առարկաներ, խեցատներ: Գրանցվել է սկյութական 4 հատկանիշ:

Խաչենագետի ավազանի դամբանախմբերը

Խաչենագետի ավազանում 5 դամբանաբլուր է պեղել Ա. Իվանովսկին: Հնագիտական այդ փակ համալիրներից մեր ընտրանքի մեջ տեղ են գտել № 2 (79) և № 4 (81) դամբարանները:

№ 2 դամբանաբլրի քարահողային լիցքը ծածկել է 2,60x1,30x1,40 մ չափերով ստորգետնյա քարարկղը, որն ուղղված է եղել արևմուտք-արևելք առանցքով: Ննջեցյալն ամփոփվել է դիաթաղման եղանակով՝ մեջքի վրա ձգված ոտքերով պառկած վիճակում, գլխով դեպի արևմուտք: Թաղումն ուղեկցվել է շան զոհաբերությամբ: Դամբարան դրված գույքի կազմում եղել են բրոնզե դաշույն, երկաթե նիզակ, պերճանքի առարկաներ, խեցանոթների բեկորներ, «այլ իրեր»: Դամբարանում արձանագրվել է սկյութական 6 հատկանիշ:

Քարահողային լիցքով ու ավելի քան 40 մ տրամագծով № 4 դամբանաբլուրը գտնվել է Քոլատակ գյուղից մոտավորապես 1–1,5 կմ դեպի հարավ: Թաղման քարարկղի չափերն են 3,00x1,35x1,40 մ, կողմնորոշվածությունը՝ դեպի հարավ–հարավ-արևելք: Թաղման խցում կատարվել է միայնակ դիաթաղում: Հանգուցյալն ամփոփվել է մեջքի վրա ձգված վիճակում: Նրան ուղեկցող գույքի կազմում առկա են եղել բրոնզե դաշույն, նիզակ, երկաթե բոլորատեգ, տնտեսական փոքր դանակ, քառակող բիգ, պերճանքի առարկաներ[13]: Փաստագրվել է սկյութական 6 հատկանիշ:

Վարանդա գետի աջափնյա դամբանախումբը

Զինարի գյուղից հյուսիս՝ Վարանդա գետի աջ ափին սփռված դամբարանադաշտում, Ա. Իվանովսկին 1896 թ. հաշվառել է 22 դամբանաբլուր, որոնցից մեկը կոչվել է «Սև շուն»: Այն ձգված-թամբաձև տեսքով արհեստական բլրակ է եղել և ունեցել է ավելի քան 40 մ երկարություն: Հիշյալ խմբի դամբարաններից պեղվել են 5-ը, որոնցից մեր ընտրանքի մեջ է մտել № 5 (91) դամբանաբլուրը: Սա այն եզակի հարուստ գույքով դամբարաններից է, որը մինչև պեղումների պահը, բարեբախտաբար, անխաթար է մնացել:

Քննարկվող դամբանաբլուրն ունեցել է մոտավորապես 26 մ տրամագիծ ու 6 մ բարձրություն: Երեք շարք գերաններով ծածկված, 10x2x2 մ չափերով հիմնահողային դամբանասրահն ուղղված է եղել հյուսիս-արևմուտք–հարավ-արևելք առանցքով: Դամբանասրահում կատարվել է անհատական դիաթաղում, որն ուղեկցվել է մարդկանց ու կենդանիների զոհաբերություններով: Հիմ-

[13] Ивановский. 1911, 143–147.

նական ննջեցյալի դին տեղադրվել է մեջքի վրա ձգված դիրքով, իսկ զոհաբերված երկու մարդկանց դիերն ամփոփվել են նստած վիճակում: Հայտնաբերվել են զոհաբերված երկու ուղտերի կմախքներ, որոնք, հավանաբար, սանձեր են կրել և պճնված են եղել զարդերով: Բրոնզից պատրաստված զենքի հարուստ տեսականին ներկայացված է նիզակով, դաշույններով, բոլորատեգերով, գուրզերով, հարթ կացնով, տարբեր նյութերից պատրաստված նետասլաքներով: Պեղումներով ի հայտ են եկել նաև կոր ծայրով դանակ, ոսկրե 2 բիզ, պերճանքի առարկաների ոսկրե հավաքածու, քարե անոթ, խեցանոթներ (աղ. III–IV), «այլ իրեր»[14]: Արձանագրվել է սկյութական 6 հատկանիշ:

Ընտրանքի ցուցակից դուրս է մնացել Արցախի Արևշատ գյուղի (նախկին Դոլանլար, Հադրութի շրջան) դամբանախումբը, որը ներկայացված է բավարար թվով սկյութական հատկանիշներով, սակայն իր կազմում եղած որևէ առանձին դամբարան՝ անբավարար տեղեկատվության պատճառով, չի ընդգրկվել թաղման համալիրների քննարկվող ցուցակում: Արևշատի դամբանադաշտի տարածքից հայտնի են երկաթե նիզակներ, կոր դանակներ, թերի դաշույններ, մետաղյա մանյակներ, բրոնզե հայելի, բրոնզե թաս, «փշավոր» գուրզ, պերճանքի առարկաներ և սկյութական մշակույթին բնորոշ այլ իրեր[15]:

Թաղման ծեսի բնորոշ բաղադրիչները

Հուղարկավորման ծեսին վերաբերող տեղեկատվական չտեմարանի ընդլայնմանը զուգահեռ, դրա պարզաբանման հարցում եղած տարակարծություններն աճում են ու իրենց արտացոլումն են գտնում հնագիտական աշխատություններում[16]: Թեև ասվածը վերաբերում է նաև Արցախի դամբանադաշտերին, որոնց հետազոտողները երբեմն պատշաճ ուշադրություն չեն դարձրել թաղման ծեսի որոշ ծիսակարգերին ու արարողություններին, այնուամենայնիվ, ձեռքի տակ եղած տեղեկատվության հիման վրա կարելի է պատկերացում կազմել մի շարք բնորոշ ծիսակատարությունների մասին: Հուղարկավորման ծիսակարգի կարևոր բաղադրիչներից են թաղման եղանակն ու ննջեցյալի դիրքը: Արցախի սկյութական մշակութային հատկանիշներով դամբարաններում դիադրման / դիաթաղման եղանակով ամփոփվել են 1–3 ննջեցյալներ, որոնցից 6-ում՝ մեջքի վրա ձգված, իսկ մեկ դեպքում՝ կողքի վրա ձգված դիրքով (Գետաբեկի № 56 դամբարան): Այս 7 թաղումները կազմում են ընտրանքի մեջ մտնող 15 դամբանների մոտավորապես 46,7 %-ը: Կարելի է ենթադրել, որ Զինարիի № 5 դամբանաբլրի թաղման սրահում մարդկանց զոհաբերություն է կատարվել: Զոհաբերված անձանց դիերը տեղադրվել են նստած վիճակում, իսկ հիմնական ննջեցյալն ամփոփվել է մեջքի վրա ձգված դիրքով:

Ձիու զոհաբերություն է փաստագրվել 3 դամբարաններում, երկու ուղտեր են զոհաբերվել 1 դամբարանում (Զինարիի № 5): Այսպիսով, ձիերի և ուղտերի զոհաբերություններ են կատարվել ընդամենը 4 դամբարաններում, որոնք կազմում են դրանց ընդհանուր քանակի մոտավորապես 26,7 %-ը: Զինարիի

---

[14] Ивановский. 1911, 151–153, 157–164.

[15] Минкевич-Мустафаева. 1949, 51–54, 59, 64, 67–68, таб. $I_{1–3}$, IV_{4}, $VI_{1–6}$.

[16] Stevenson. 2007, 1–2.

№ 5 դամբարանում գոհաբերված ուղտերի և Գետաբեկի № 56-ում գոհաբերված ձիու հետ դամբարան են դրվել նաև սանձերը, իսկ Ներքին Հոռաթաղի դամբարանում հայտնաբերվել են միայն ձիասարքի մասերը՝ առանց ձիու կմախքի:

Աղյուսակ III



Զինարիի № 5 հիմնահողային դամբարանի թաղման գույքը (Ивановский. 1911, таб. XV):

Աղյուսակ IV



Զինարիի № 5 հիմնահողային դամբարանի թաղման գույքը (Ивановский. 1911, таб. XVI):

Հին պատկերացումների համաձայն՝ մասը փոխարինում էր ամբողջին, ուստի դամբանախցում մեկ լկամ թողնելը, ըստ երևույթին, համարժեք էր ձիու զոհաբերությանը[17]: Շան զոհաբերություն է փաստագրվել Խոջալիի № 2 և Խաչենագետի № 2 դամբարաններում, որոնք կազմում են ընտրանքի մեջ մտնող 15 դամբանների մոտավորապես 13,3 %-ը: Սկյութական տիպի նետասլաքներ են հայտնաբերվել Ներքին Հոռաթաղի ու Գետաբեկի № 48 դամբարաններում: Խաչենագետի № 4 դամբարանում գտնվել է երկաթե բոլորատեգ, իսկ Զինարիի № 5 դամբարանում ի հայտ են եկել բրոնզե բոլորատեգեր: Սրոցաքարեր են հայտնաբերվել Գետաբեկի № 33 և Ներքին Հոռաթաղի դամբարաններում: Խոջալիի № 18 դամբանաբլրում և Շուշիից հարավ ընկած «դամբարանում» փաստագրվել են բրոնզե զարդախողովակներ:

[17] Туманян. 2023, 76.

Թաղման ծեսի որոշակի զուգահեռներ

Համարվում է, որ ձգված ոտքերով մեջքի վրա պառկած դիրքը, որը բնորոշ է սկյութական մշակույթին պատկանող դամբարաններում ամփոփված հիմնական ննջեցյալներին, խիստ հազվադեպ է հանդիպում Այսրկովկասի ուշբրոնզեդարյան թաղումներում[18]: Դրանք բնորոշ չեն ինչպես Հայաստանի[19], այնպես էլ Արևելյան Վրաստանի ուշբրոնզեդարյան դամբարանադաշտերին[20]:

Հայտնի է, որ օսերը՝ ալան նախնիներով միջնորդավորված, համարվում են սկյութների ժառանգորդները[21]: Օսեթիայում՝ թաղման արարողության համար հատուկ հանդերձավորված ձիուն գերեզմանի մոտ էին բերում ու սանձը դնելով մահացած տղամարդու ձեռքերի մեջ՝ ասում էին. «Թող այս ձին քոնը լինի»: Ձիուն երեք անգամ պտտում էին գերեզմանի շուրջը, խուզում էին պոչի ծայրը, ականջին կտրվածք էին անում, ջուր էին տալիս դրան ու կերակրում: Այնուհետև մի թաս խփելով ձիու սմբակին՝ ջարդում էին ու բեկորները գերեզման դնում: Ձիուն նվիրագործող ծերունին իր խոսքում նկարագրում էր ննջեցյալին սպասվող դժվարին ճանապարհը և խնդրում էր ձիուն օգնել իր տիրոջը նախնիների օթևանը տանող ճանապարհին[22]:

Թաղման ծեսի վերականգնմանը և ուսումնասիրությանն էապես կարող է նպաստել արցախյան գորգերից մեկի պատկերագրության վերլուծությունը, որը կատարել է Լիլյա Ավանեսյանը: Գորգը գործել են XX դարի սկզբին Վարանդայում, որը նվիրաբերվել է Ավետիքյանց ազգանունով նշանավոր մի անձնավորության հիշատակին: Հետազոտողը դրա հիմնադաշտի զարդաբանվածքը, իրավացիորեն, համեմատում է Պազիրիկի (Ալթայ) դամբարաններից մեկում հայտնաբերված գորգի պատկերագրության հետ և Արցախում գործված գորգն անվանում Պազիրիկ: Բացի այդ՝ արցախահայերի ու սկյութների թաղման ծեսերում ընդհանուր է նաև գորգը ննջեցյալի հետ գերեզմանոց տանելու սովորությունը[23]:

Պազիրիկի դամբանաբլուրներում ձիերը թաղված են եղել դամբանախցերի հյուսիսային պատերի երկայնքով, դեպի արևելք ուղղված գլուխներով, մի քանի շարքով՝ յուրաքանչյուրում 4-ական առանձնյակ: Քիչ տեղ զբաղեցնելու նպատակով դրանք տեղադրվել են «վիրավոր եղջերուի» դիրքով: Դամբարան իջեցված բոլոր ձիերն արական են, ենթադրաբար՝ ամորձատված, պոչերը՝ հյուսված: Իրողություն, որը, ըստ երևույթին, բնորոշ է թաղման արարողությանը[24]: Այս ենթադրությունը հաստատվում է Հարավային Սիբիրում հայտնաբերված սկյութական գոտիներից մեկի վահանակի պատկերագրությամբ[25]: Պազիրիկի հիշյալ դամբարանում հայտնաբերված թաղիքե գորգին պատկերված է մահացած հեծյալը՝ մահվան աստվածուհու առջև[26]: Գորգի վրա պատկերված ձիերի պոչերը նույնպես հյուսված են:

---

[18] ფიცხელაური. 1973, 80; Пицхелаури. 1979, 27.

[19] *Թումանյան. 2007, 147:*

[20] Садрадзе. 1991, 25.

[21] Абаев. 1949, 36–47; Ковалевская. 1984, 74–76; Дюмезиль. 1990, 7.

[22] Дюмезиль. 1976, 42; Кузьмина. 1977, 43; Дюмезиль. 1990, 189.

[23] *Ավանեսյան. 2003, 112–113, 119, Ավանեսյան. 2010, 397–399:*

[24] Витт. 1952, 163–168, 182–184.

[25] Гуляев. 2013, 13, илл. 2.

[26] Hansen. 1980, 35.

Եզրակացություն

Արցախի դամբանադաշտերում հանդիպում են սկյութական մշակութային հատկանիշներով դամբարաններ: Դրանք հնարավոր է առանձնացնել սկյութական թաղումներում հանդիպող մի քանի տասնյակ (այդ թվում՝ ընորոշիչ) հատկանիշների դիտարկման շնորհիվ: Այդ մեթոդով առայժմ հաջողվել է ընտրել արցախյան 15 հնագիտական փակ համալիր: Արցախի սկյութական հատկանիշներով դամբարաններում փաստագրված թաղման ծիսակարգերը և ծիսակատարությունները սերտ ընդհանրություններ ունեն Հայկական լեռնաշխարհի և այլ տարածաշրջանների դամբարանադաշտերում կիրառություն գտած թաղման ծեսի համապատասխան բաղադրիչների հետ: Հիշյալ տիպի դամբարաններին բոլոր տարածաշրջաններում բնորոշ են դիադրման եղանակով, մեջքի վրա պառկած կամ կողքի վրա ձգված դիրքով թաղումները, որոնք ուղեկցվել են մարդկանց, ձիերի ու շների զոհաբերություններով: Ուղեկցող գույքի կազմում զգալի տեղ են զբաղեցնում սկյութական զենքը, ձիասարքի որոշակի տիպերը և «կենդանական ոճի» նմուշները:

Ազգաբանական ուսումնասիրությունները նույնպես վկայում են թաղման ծեսերի որոշ ընդհանրությունների հնարավորության մասին: Օսերը, որոնք ալան նախնիներով միջնորդավորված, սկյութական ցեղերի ժառանգորդներից են, ննջեցյալին ձի էին նվիրաբերում: Համեմատության եզրեր կարելի է գտնել անցյալ դարասկզբին Արցախում գործված գորգերից մեկի պատկերագրության և շատ ավելի հեռու տարածաշրջանում՝ Պազիրիկի հնագույն դամբարաններից մեկում հայտնաբերված թաղիքե գորգի զարդաբանվածքի հետ:

Գարեգին Թումանյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան հնագիտական մշակույթներ, թաղման ծես, կիմերական հնագիտական մշակույթ, մշակութային փոխառնչություններ: Հեղինակ է 5 գրքի և 70 հոդվածի:
ORCID: 0000-0002-6696-0093. garegin.tumanyan@iae.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 1972, Հայերի ծագումը (անավարտ). – «Հայաստանի պատմություն», Երևան, «Հայաստան» հրատ., էջ 287–346:

Ասրյան Յ. 1973, Հնագիտական նորույթներ Լեռնային Ղարաբաղում. – ՊԲՀ, № 2, էջ 295–300:

Ավանեսյան Լ. 2003, Արցախյան գորգ թաղման ծեսի պատկերով. – «Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ», II, Երիտասարդ գիտնականների հանրապետական X գիտաժողովի նյութեր (խմբ. Դ. Վարդումյան, Լ. Աբրահամյան, Գ. Շագոյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 112–120:

Ավանեսյան Լ. 2010, Գորգի ծագումը և ծիսական կիրառությունը. – «Հայ ժողովրդական մշակույթ», XV, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում (խմբ. Լ. Աբրահամյան, Ա. Թադևոսյան, Թ. Հայրապետյան), Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 389–399:

Դաղեան Խ. 1898, Նախապատմական հնութիւններ. – Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ Վարդապետի, Մասն Ա (կազմ. Յ. Թօփճեան), Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, էջ 63–74:

Երեմյան Ս. 1968, Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ. – ՊԲՀ, № 2, էջ 89–116:

Թումանյան Գ. 2007, Թաղման ծիսակարգերը ուշբրոնզեդարյան Հայաստանում. – ՊԲՀ, № 1, էջ 138–152:

Ջահուկյան Գ. 1987, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 748 էջ:

Ստրաբոն. 1940, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Յերևան, Պետական համալսարանի հրատ., 124 էջ:

Абаев В. И. 1949, Осетинский язык и фольклор, т. 1. М.–Л., изд. АН СССР, 601 с.

Асрян Ю. А. 1999, Нагорный Карабах в эпоху поздней бронзы и раннего железа (II–I тыс. до н.э.). Степанакерт, изд. центр ГЗАО «Полиграф», 119 с.

Витт В. О. 1952, Лошади Пазырыкских курганов. – «Советская археология» (М.), XVI, с. 163–205.

Гуляев В. 2013, Скифы: расцвет и падение великого царства. М., «Новый Акрополь», 400 с.

Дьяконов И. 1956, История Мидии. М.–Л., изд. АН СССР, 485 с.

Дюмезиль Ж. 1976, Осетинский эпос и мифология, пер. с франц. А. З. Алмазовой. М., «Наука», 276 с.

Дюмезиль Ж. 1990, Скифы и нарты, сокр. пер. с франц. А. З. Алмазовой. М., «Наука», 229 с.

Ивановский А. 1911, По Закавказью. – «Материалы по археологии Кавказа», вып. VI. М., Товар. тип. А. И. Мамонтова, 194 с.

Иессен А. 1965, Из исторического прошлого Мильско-Карабахской степи. – «Материалы и исследования по археологии СССР», № 125. М.–Л., изд. АН СССР, с. 10–36.

Ковалевская В. Б. 1984, Кавказ и аланы. Века и народы. М., «Наука», 192 с.

Кузьмина Е. Е. 1977, Распространение коневодства и культа коня у ираноязычных племен Средней Азии и других народов Старого Света. – «Средняя Азия в древности и средневековье (история и культура)» (ред. Б. Г. Гафуров, Б. А. Литвинский). М., «Наука», с. 28–52.

Кушнарева К. 1959, Археологические работы 1954 г. в окрестностях сел. Ходжалы. – «Материалы и исследования по археологии СССР», № 67. М.–Л., изд. АН СССР, с. 370–387.

Кушнарева К. 1970, Ходжалинский могильник. – ИФЖ, № 3, с. 109–124.

Меликишвили Г. 1959, К истории древней Грузии. Тбилиси, изд. АН ГрССР, 510 с.

Минкевич-Мустафаева Н. 1949, Об археологических находках из сел. Доланлар.– «Материальная культура Азербайджана», I. Баку, изд. АН АзССР, с. 50–70.

Мровели Л. 1979, Жизнь картлийских царей, перевод с древнегрузинского, предисловие и комментарии Г. В. Цулая. М., «Наука», 104 с.

Պատմագրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Пицхелаури К. Н. 1979, Восточная Грузия в конце бронзового века. Тбилиси, «Мецниереба», 160 с.

Реслер Э. 1897, Производство археологических раскопок в Елизаветпольской губернии. – «Отчеты Императорской археологической комиссии за 1895 год». СПб., Типография Главного управления уделов, с. 49–51.

Реслер Э. 1900, Извлечение из отчета Э. А. Реслера о раскопках, произведенных им в Елизаветпольской губернии. – «Отчеты Императорской археологической комиссии за 1897 год». СПб., Типография Главного управления уделов, с. 150–160.

Садрадзе В. Г. 1991, Мцхета в XV–XIII вв. до н.э. (вопросы хронологии и периодизации памятников Шида Картли). Тбилиси, «Мецниереба», 121 с.

Тер-Аветисян С. 2010, Памятники древности Карабаха и скифская проблема. – «Арменоведческие исследования». Ереван, «Гитутюн», с. 175–194.

Туманян Г. С. 2023, Жертвоприношение коня в погребальных обрядах (по данным погребений эпох бронзы и раннего железа в Армении). – «Российская археология» (М.), № 1, с. 70–83.

Hansen L. J. 1980, Death and the Indo-Europeans: some traditions. – “The Journal of Indo–European studies” (Washington), vol. 8/1–2, pp. 31–40.

Stevenson A. 2007, Introduction: the materiality of burial practices. – “Archaeological Review from Cambridge” (Cambridge), vol. 22/1, pp. 1–5.

ფიცხელაური კ. 1973, აღმოსავლეთ საქართველოს ტომთა ისტორიის ძირითადი პრობლემები (ძვ.წ. XV–VII სს.) (არქეოლოგიური მასალების მიხედვით), თბილისი, “მეცნიერება”, 224 გვ.

REFERENCES

Abayev V. I. 1949, Osetinskiy yazyk i fol'klor, t. 1. M.–L., izd. AN SSSR, 601 s. (In Russian).

Adonts’ N. 1972, Hayeri tsagumy (anavart). – «Hayastani patmut’yun», Yerevan, «Hayastan» hrat., ej 287–346 (In Armenian).

Asryan Y. 1973, Hnagitakan noruyt’ner Lernayin Gharabaghum. – PBH, № 2, ej 295–300 (In Armenian).

Asryan Yu. A. 1999, Nagornyy Karabakh v epokhu pozdney bronzy i rannego zheleza (II–I tys. do n.e.). Stepanakert, izd. tsentr GZAO «Poligraf», 119 s (In Russian).

Avanesyan L. 2003, Arts’akhyan gorg t’aghman tsesi patkerov. – «Hay azgabanut’yan yev hnagitut’yan khndirner», II, Yeritasard gitnakanneri hanrapetakan X gitazhoghovi nyut’er (khmb. D. Vardumyan, L. Abrahamyan, G. Shagoyan), Yerevan, HH GAA «Gitut’yun» hrat., ej 112–120 (In Armenian).

Avanesyan L. 2010, Gorgi tsagumy yev tsisakan kirarut’yuny. – «Hay zhoghovrdakan mshakuyt’», XV, Avandakany yev ardiakany hayots’ mshakuyt’um (khmb. L. Abrahamyan, A. T’adevosyan, T’. Hayrapetyan), Yerevan, HH GAA hnagitut’yan yev azgagrut’yan instituti hrat., ej 389–399 (In Armenian).

Dadean Kh. 1898, Nakhapatmakan hnut'iwnner. – Ts'uts'ak dzeragrats' Dadean Khachik Vardapeti, Masn A (kazm. Y. T'op'chean), Vagharshapat, Tparan Mayr Atoroy S. Ejmiatsni, ej 63–74 (In Armenian).

D'yakonov I. 1956, Istoriya Midii. M.–L., izd. AN SSSR, 485 s. (In Russian).

Dyumezil' Zh. 1976, Osetinskiy ēpos i mifologiya, Per. s frants'. A. Z. Almazovoy. M., «Nauka», 276 s. (In Russian).

Dyumezil' Zh. 1990, Skify i narty, Sokr. per. s frants. A. Z. Almazovoy. M., «Nauka», 229 s. (In Russian).

Gulyayev V. 2013, Skify: Rasts'vet i padeniye velikogo ts'arstva. M., «Novyy Akropol'», 400 s. (In Russian).

Ivanovskiy A. 1911, Po Zakavkaz'yu. – «Materialy po arkheologii Kavkaza», vyp. VI. M., Tovar. tip. A. I. Mamontova, 194 s. (In Russian).

Jahukyan G. 1987, Hayots' lezvi patmut'yun. Nakhagrayin zhamanakashrjan, Yerevan, HSSH GA hrat., 748 ej (In Armenian).

Kovalevskaya V. B. 1984, Kavkaz i alany. Veka i narody. M., «Nauka», 192 s (In Russian).

Kushnareva K. 1959, Arkheologicheskiye raboty 1954 g. v okrestnostyakh sel. Khodzhaly. – «Materialy i issledovaniya po arkheologii SSSR», № 67. M.–L., izd. AN SSSR, s. 370–387 (In Russian).

Kushnareva K. 1970, Khodzhalinskiy mogil'nik. – IFZH, № 3, s. 109–124.

Kuz'mina Ye. Ye. 1977, Rasprostraneniye konevodstva i kul'ta konya u iranoyazychnykh plemen Sredney Azii i drugikh narodov Starogo Sveta. – «Srednyaya Aziya v drevnosti i srednevekov'ye (istoriya i kul'tura)» (red. B. G. Gafurov, B. A. Litvinskiy). M., «Nauka», s. 28–52 (In Russian).

Melikishvili G. 1959, K istorii drevney Gruzii. Tbilisi, izd. AN GrSSR, 510 s (In Russian).

Minkevich-Mustafayeva N. 1949, Ob arkheologicheskikh nakhodkakh iz sel. Dolanlar.– «Material'naya kul'tura Azerbaydzhana», I. Baku, izd. AN AzSSR, s. 50–70 (In Russian).

Mroveli L. 1979, Zhizn' kartliyskikh ts'arey. Perevod s drevnegruzinskogo, predisloviye i kommentarii G. V. Tsulaya. M., «Nauka», 104 s (In Russian).

Pitskhelauri K. 1973, Aghmosavlet' Sak'art'velos tomt'a istoriis dzirit'adi problemebi (dzv. ts. XV–VII ss.) (ark'eologiuri masalebis mikhedvit'), Tbilisi, "Mets'niereba", 224 gv (In Georgian).

Pitskhelauri K. N. 1979, Vostochnaya Gruziya v konts'e bronzovogo veka. Tbilisi, «Mets'niereba», 160 s (In Russian).

Resler Ē. 1897, Proizvodstvo arkheologicheskikh raskopok v Yelizavetpol'skoy gubernii. – «Otchety Imperatorskoy arkheologicheskoy komissii za 1895 god», SPb., Tipografiya Glavnogo upravleniya udelov, s. 49–51 (In Russian).

Resler Ē. 1900, Izvlecheniye iz otcheta Ē. A. Reslera o raskopkakh, proizvedennykh im v Yelizavetpol'skoy gubernii. – «Otchety Imperatorskoy arkheologicheskoy komissii za 1897 god». SPb., Tipografiya Glavnogo upravleniya udelov, s. 150–160 (In Russian).

Sadradze V. G. 1991, Mts'kheta v XV–XIII vv. do n. ě. (voprosy khronologii i periodizatsii pamyatnikov Shida Kartli). Tbilisi, «Mets'niereba», 121 s. (In Russian).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Strabon 1940, K'aghets' yev t'argmanets' H. Acharyan, Yerevan, Petakan hamalsarani hrat., 124 ej (In Armenian).

Ter-Avetisyan S. 2010, Pamyatniki drevnosti Karabakha i skifskaya problema. – «Armenovedcheskiye issledovaniya». Yerevan, «Gitutyun», s. 175–194.

T'umanyan G. 2007, T'aghman tsisakargery ushbronzedaryan Hayastanum. – PBH, № 1, ej 138–152 (In Armenian).

Tumanyan G. S. 2023, Zhertvoprinosheniye konya v pogrebal'nykh obryadakh (po dannym pogrebeniy epokh bronzy i rannego zheleza v Armenii). – «Rossiyskaya arkheologiya» (M.), № 1, s. 70–83 (In Russian).

Vitt V. O. 1952, Loshadi Pazyrykskikh kurganov. – «Sovetskaya arkheologiya» (M.), XVI, s. 163–205 (In Russian).

Yeremyan S. 1968, Kimerakan u skyut'akan ts'egheri arshavank'nery yev Urartui u Asorestani payk'ary k'och'vorneri dem. – PBH, № 2, ej 89–116 (In Armenian).

Yessen A. 1965, Iz istoricheskogo proshlogo Mil'sko-Karabakhskoy stepi. – «Materialy i issledovaniya po arkheologii SSSR», № 125, M.–L., izd. AN SSSR, s. 10–36 (In Russian).

ПОГРЕБЕНИЯ АРЦАХА С ПРИЗНАКАМИ СКИФСКОЙ КУЛЬТУРЫ

ГАРЕГИН ТУМАНЯН

Р е з ю м е

Ключевые слова: Арцах, погребение, могильник, усопший, конь, уздечка, признак, скифский, наконечник стрелы.

Факт былого присутствия скифских племен на востоке Армянского нагорья давно стал объектом внимания исследователей. По всей вероятности, Гандзакская равнина в провинции Утик Великой Армении, называемая армянами Шакашен, являлась одним из ареалов концентрации скифских племен, проникших в Закавказье. Еще в прошлом столетии бытовала точка зрения, согласно которой часть курганов в провинции Арцах, граничащей с этим регионом, была сооружена скифами. Впоследствии в Арцахе были проведены раскопки сотен погребений, из которых 15 нами были выбраны в качестве предмета исследования. В данную выборку включены те погребения Арцаха, которым присущи минимум три признака, характерные для скифской культуры, по меньшей мере один из которых является маркером. На основе данных, полученных в результате археологического изучения погребений исторических провинций Варанда и Парнес, бассейна Хаченагета и правого берега реки Варанда, мы попытались реконструировать некоторые погребальные ритуалы и церемонии. Между погребениями, относящимися к скифской культуре Арцаха и других регионов, прослеживается очевидное сходство.

Гарегин Туманян – д. и. н., старший научный сотрудник отдела ранней археологии Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: археологические культуры эпох бронзы и железа Армянского нагорья, погребальные обряды, киммерийская археологическая культура, культурные взаимосвязи. Автор 5 книг и 70 статей.
ORCID: 0000-0002-6696-0093. garegin.tumanyan@iae.am

SEPULCHRES IN ARTSAKH WITH SCYTHIAN CULTURAL CHARACTERISTICS

GAREGIN TUMANYAN

S u m m a r y

Keywords: Artsakh, sepulchre, burial ground, deceased, horse, bridle, characteristic, Scythian, arrowhead.

The fact of the former presence of Scythian tribes in the east of the Armenian Highland has long attracted the attention of researchers. In all likelihood, the Gandzak plain in the Utik province of Greater Armenia, which the Armenians called Shakashen, was one of the places of concentration of Scythian tribes that penetrated into Transcaucasia. A century ago, it was believed, that some burial mounds in the Artsakh province, bordering this region, were built by the Scythians. Later, hundreds of sepulchres were excavated in Artsakh, 15 of which were selected as a subject of research. This sample includes the sepulchres of Artsakh in which there are at least three characteristics of the Scythian culture, at least one of which is a marker. Based on the data obtained from archaeological investigation of sepulchres in historical provinces of Varanda and Parnes, Khachenaget basin and the right bank of the Varanda River, we made an attempt to reconstruct some burial rituals and ceremonies. Obvious ritual similarities are observed between Scythian sepulchres located in Artsakh and other regions.

Garegin Tumanyan – Doctor of Sciences in History, Senior Researcher at the Department of Early Archaeology of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Scientific interests: Bronze and Iron Age cultures of the Armenian Highland, burial rites, Cimmerian archaeological culture, cultural relationships. Author of 5 books and 70 scientific articles.
ORCID: 0000-0002-6696-0093. garegin.tumanyan@iae.am

Պատմություն • History • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2